ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

0095, Երեւան, Մ.Բաղրամյան պող.,19

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ա.ԲԱԲԼՈՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Բաբլոյան

Համաձայն ՀՀ սահմանադրության 108-րդ հոդվածի 2-րդ մասի և առաջնորդվելով ՀՀ «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածով Ձեզ եմ ներկայացնում ՀՀ գազի և էլեկտրաէներգիայի մատակարարման և բաշխման համակարգերի գործունեությունը, գազի և էլեկտրաէներգիայի գործող սակագների հիմնավորվածությունը քննության առարկա դարձնելու նպատակով ԱԺ քննիչ հանձնաժողով ստեղծման մասին ներքոստորագրյալ պատգամավորների դիմումը, հաշվի առնելով, որ վերջին 10-15 տարիների ընթացքում գազի և էլեկտրաէներգիայի մատակարարման և բաշխման ոլորտներում պարբերաբար արձանագրվել են սակագների բարձրացում, որոնց հիմնավոր լինելը հաճախ հանրության լայն շրջանակներում առաջացրել է անվստահություն և սոցիալական լարվածություն, և այն որ դեռևս 2014-2015թթ. ՀՀ 5-րդ գումարման ԱԺ-ում ստեղծվել էր վերոնշյալ խնդիրների ուսումնասիրման ժամանակավոր հանձնաժողով, որի կողմից արձանագրված խնդիրները չեն լուծվել, առաջարկությունները չեն իրագործվել, իսկ քննարկվող խնդիրները շարունակում են ունենալ լայն հանրային հնչեղություն, միաժամանակ հանրությանը և ձեռնարկատերերին հետաքրքրում են գազի և էլեկտրաէներգիայի սակագների իջեցման հնարավորությունները:

ՔՆՆԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ Է՝

Գազի և էլեկտրաէներգիայի մատակարարման և բախշման համակարգերի գործունեությունը, գազի և էլեկտրաէներգիայի սակագների հիմնավորվածությունը:

ՔՆՆԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆ Է՝

Քննության առարկա ոլորտին առընչվող պետական կառավարման մարմինների և հանրային ծառայությունները կարգավորող կառույցների գործունեության նկատմամբ վերահսկողությունը:

Որպես քննիչ հանձնաժողովի նախագահ է առաջարկվում ՀՀ ԱԺ նախագահի տեղակալ Միքայել Մելքումյանը:

Հանձնաժողովի լիազորությունների ժամկետը սահմանել քննիչ հանձնաժողովի ստեղծման պահից սկսած 6 ամիս:

Քննիչ հանձնաժողովի անդամների թիվը սահմանել տասնմեկ:

Քննիչ հանձնաժողովի կազմը սահմանել հետևյալ համամասնությամբ՝

«Հայաստանի Հանրապետական կուսակցություն» խմբակցություն – 5 անդամ

«Ծառուկյան» դաշինք խմբակցություն – 3 անդամ

ԵԼՔ խմբակցություն – 2 անդամ

«Հայ Յեղափոխական Դաշնակցություն» խմբակցություն – 1 անդամ

1. [illegible] 063 [illegible]
2. [illegible] 082 [illegible]
3. [illegible] 073 [illegible]
4. [illegible] 066 [illegible]
5. [illegible] 084 [illegible]
6. [illegible] 068 [illegible]
7. [illegible] 062 [illegible]
8. [illegible] 070 [illegible]

9. [illegible] 074
10. [illegible] 087
11. [illegible] 069
12. [illegible] 077
13. [illegible] 077
14. [illegible] 069
15. [illegible] 078
16. [illegible] 083
17. [illegible] 080
18. [illegible] 071
19. [illegible] 089
20. [illegible] 081
21. [illegible] 085
22. [illegible] 061
23. [illegible] 086
24. [illegible] 088
25. [illegible] 079
26. [illegible] 075
27. [illegible] 064
28. [illegible] 063

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

0095, Երեւան, Մ.Բաղրամյան պող.,19

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱԶԻ ԵՎ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ԲԱԽՇՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ, ԳԱԶԻ ԵՎ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԳՈՐԾՈՂ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱ ԴԱՐՁՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՔՆՆԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԹԻՎԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ազգային ժողովը ՈՐՈՇՈՒՄ Է.

Հիմք ընդունելով ՀՀ սահմանադրության 108-րդ հոդվածի 2-րդ մասը և առաջնորդվելով ՀՀ «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասով և «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասով՝ ՀՀ գազի և էլեկտրաէներգիայի մատակարարման և բախշման համակարգերի գործունեությունը, գազի և էլեկտրաէներգիայի գործող սակագների հիմնավորվածությունը քննության առարկա դարձնելու նպատակով ստեղծված քննիչ հանձնաժողովի անդամների թիվը սահմանել տասնմեկ: